# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ | սեղան՝ ղեկավարի | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Գրասենյակային սեղաններ՝ նախատեսված ղեկավարների համար, որոնք ունենան նաև դիմադիր և կողադիր սեղաններ։ Սեղանը պատրաստված լինի մեկ ամբողջական առնվազն 18 մմ հաստությամբ լամինատից, լինի երկշերտանի՝ հաստեցված առնվազն 36 մմ չափսերով։ Արտաքին չափսերը լինի 1900x650x750 մմ (±2 մմ) /երկարություն, լայնություն, բարձրություն/։ Եզրակալված լինի ոչ պակաս քան 2 մմ պոլիվինիլքլորիդային ծածկույթով |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | (PVC), դիմային պատը մինչև հատակ։ Դիմային պատի վրա ամրացված լինի 16-18 մմ հաստությամբ և 1300 մմ (±2 մմ) երկարությամբ 17- 19 հատ լամինատե ուղղանկյունաձև փայտիկներ, որոնք պետք է դասավորված լինեն ուղղահայաց։ Սեղանի երեսին փորված և սիլիկոնե սոսնձով ամրացված լինի մկնիկի համար նախատեսված ռեզինե գորգ՝ առնվազն 15x 20 սմ չափսերով։ Սեղանի երեսի աջ կամ ձախ հատվածում տեղադրված լինի հոսանքալարերի համար նախատեսված անցքեր՝ սոսնձով ամրացված բացված երկաթյա կափարիչով։ Սեղանն ունենա աջ կամ ձախ հատվածում ներկառուցված երեք դարակներ, մեկ դարակը լինի փականով, սղմակները՝ վակումային։ Դարակի չափսերը լինեն առնվազն 50*50*65 սմ /երկարություն, լայնություն, բարձրություն/։ Ունենա պրոցեսորի համար նախատեսված համակցված տակդիր։ Դիմադիր- պատրաստված լինի մեկ ամբողջական առնվազն 18 մմ հաստությամբ լամինատից, լինի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | երկշերտանի՝ հաստեցված առնվազն 36 մմ չափսերով։։ Չափսերը առնվազն 1200 x 600 x 714 մմ (երկարություն/լայնություն/բարձրություն)։ Սեղանի կողմի հատվածը ամրացված լինի դիմադիրին՝ ներկառուցված պտուտակների օգնությամբ, իսկ դիմադիրի դիմային հատվածը պատրաստված լինի լամինատից՝ առնվազն 600 x 700 մմ (լայնություն/բարձրություն) չափսերով։ Կողադիր-Սեղանի աջ կամ ձախ հատվածում տեղադրված լինի կողադիր։ Կողադիրը պատրաստված լինի մեկ ամբողջական առնվազն 18 մմ հաստությամբ լամինատից, լինի երկշերտանի՝ հաստեցված առնվազն 36 մմ չափսերով, որը պետք է ամրանա սեղանին ներկառուցված պտուտակների օգնությամբ։ Արտաքին չափսերը լինի 1000x 400 x 750 մմ (±2 մմ) /երկարություն, լայնություն, բարձրություն/։ Եզրակալված լինի ոչ պակաս քան 2 մմ պոլիվինիլքլորիդային ծածկույթով (PVC)։ Գույնը՝ շականակագույն՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համաձայնեցնելով պատվիրատուի հետ։ Երաշխիքային ժամկետը լինի առնվազն մեկ տարի։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |